

**ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ գյուղապետարանից հայտարարում է մրցույթ Շահումյանի թ/Ֆ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության առաջատար պաշտոնի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1)

Առաջատար մասնագետը Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է դրամական միջոցների մուտքագրման, դուրսգրման, այդ թվում աշխատակազմի վարձման աշխատանքները: Հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին: Ունի համակարգչի գերազանց իմացություն:

Առաջատար մասնագետն ունի այլ իրավունքներ և պարտականություններ՝ համաձայն իր պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն

բ) պաշտոնի անձնագրի 6-րդ կետի բ. ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թվականի մայիսի \_\_\_-ին ժամը \_\_\_<sup>00</sup>-ին Շահումյանի թ/Ֆ գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով( ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս)
- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թ.-ի մարտի 3-ի N 310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանապակ գործունակ:
- Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային, տեղամասային կցագրման վկայականի պատճենները:
- Մեկ լուսանկար 3x4 չափսի:
- Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ Շահումյանի թ/Ֆ գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՍԾ վարչություն ( հասցե Արոյան 71, հեռ. 0237 2-07-70):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր մինչև ժամը 16<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մինչև 2012 թ. \_\_\_\_\_ի \_\_\_\_\_ը: